



ԲԱԺԱՆՈՐՉ ԱԿՐՈՒԹԻՒՆ

Պոլիարիոյ հանար  
Տարեկան 10 մր.  
Վեցամսեայ 5 »  
Արտասահմանի հա-  
մար տարեկան 12 »  
Վեցամսեայ 6 »  
ԿԱՆԻՍԻ ՎՃԱՐՆԵԼԻ  
—)(—  
Գրութիւնք եւ չիւն տրուի  
—)(—  
Իրանուցեան տողը 20 սան-  
րիւն է. Լրեփեան տեխնիկա-  
գիտական համար 20 010  
գեղեկ կրկնայ :

# ՇԱՐՇՈՒՄ

R. P. Kalémkarian  
(Kupri-he) Mechitharistangasse W. 4  
Vienna

Նամակ եւ դրամ դրկեյ  
եւ բարոյութեան հասցիին

—

Редакция на вѣстникъ  
«Шаржумъ»  
Варна.

Redaction du journal  
«Charjoun»  
Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՔԱԹ ՕՐԵՐԸ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

Отговорникъ: А. Сукясовъ.

### ՊԵՏՔ ՍԸ

—)(—

Անցեալ օր դիպուածով գրա-  
րոցական դասագրքերու ցանկ մը  
անցաւ ձեռքս : Պոլիս տպագրութեամբ  
այդ գիրքերը պիտի գործած-  
ուէին Պոլիարիոյ հայ դպրոցներէն  
մէկուն մէջ : Հարեւանցի  
ակնարկ մը զիս համոզեց թէ  
թուրք գրաքննութեան մանրա-  
զննիւն եւ բժախնդիր բովէն ան-  
ցած, իրենց ամենէն լաւ եւ հիւ-  
թեղ տարրերէն փեթուած, մաղ-  
ուած, հիւծած այդ դասագրքերը  
հիմնապէս անօգուտ էին մեր ար-  
տասանմանի դպրոցներուն հա-  
մար :

Ինչո՞ւ համար մենք, աղատ  
երկիրներու մէջ բնակող հայերս,  
մեր յօժար կամքով ընդունինք  
այդ գրքերը որոնք միայն ստիպ-  
ման տակ կը գործածուին Թուր-  
քիոյ մէջ : Օրինակի համար,  
«տէր բային» բացատրած տտեն-  
նիս, ինչո՞ւ «կատուն կերտ  
մուկը» պէս անհեթեթ նախա-  
դասութիւններ գործածելով բա-  
ւականանաք, եւ չըսենք «Հայաս-  
տանը մեր հայրենիքն է» «Գուն  
զինուոր պիտի ըլլաս», եւ այն-  
քան ուրիշ օրինակներ մեր հին  
եւ արդի կեանքի պարագանե-  
րէն, մեր տառապանքներէն,  
փառքերէն եւ յոյսերէն : Ասոնց  
օգտակարութիւնը անհուն է . ո՛չ  
թէ միայն ամենէն չոր ուսմանքը  
հրապուրիչ եւ շահեկան կը դար-  
ձնեն, այլ եւ ամենէն տարրական  
դասընթացներուն մէջ իսկ կա-  
րելի է այս կերպով ձեռնարկել  
բուն ազգային դաստիարակու-  
թեան, եւ հայրենի երկրին ու մէջ  
մէկ սարին, հովտին ու փլատա-  
կին սէրը շարունակ հայ մանուկին  
սրտին հետ, անոր ամենէն թարմ  
հասակէն սկսելով :

Արտասանմանի հայ դպրոցներուն  
մէջ պաշտօնավարող ուսուցիչներ-  
րուն կիշնայ աշխատիլ եւ յօրինել  
աղատ, անկաշկանդ դասագրքեր,  
յատկապէս աղատ երկիրներու  
մէջ ապաստանած հայ դպրոցա-  
կանին համար :

Անհրաժեշտ պէտք մը կերեայ  
մեզ այս ձեռնարկը : Եւ կը հուսա-

տանք թէ այսպիսի աշխատու-  
թեան մը ձեռնարկողները չեն  
զլջար, քանի որ ապահով սպա-  
ռում մը կը սպասէ այդ գրքերուն,  
Պոլիարիոյ, Ռուսմանիոյ, Եգիպ-  
տոսի եւ Պարսկաստանի հայ դպ-  
րոցներուն մէջ :

ԳԱՐԵՐ-ԱՐԴԱԻՐ

### ՕՐԸ ՕՐԻՆ

ՍԱՍՍՈՆ

—)(—

«Շարժում» նախորդ թիւին  
մէջ, կովկասեան թերթերէ քա-  
ղելով, ծանուցած էինք թէ ուս-  
լրագիր մը կենսագրական ծա-  
նօթութիւններ հրատարակած է  
Սամսոն Տէր Պողոսեանի վրայ,  
այն հայուն՝ որ Պայաղիտի մէջ  
պաշարուած 1,500 ուսուսկան զի-  
նուորներու կեանքը փրկած էր :

Անշուշտ մեր ընթերցողներու  
համար շահեկանութեան զուրկ  
չըլլար եթէ քանի մը տողերու  
մէջ բացատրենք թէ ի՞նչ տպ-  
նապալից վայրկեաններու մէջ,  
հայ երիտասարդ մը իր քաջու-  
թիւնով յաջողած է ուսուցիչ  
շակիւն պատիւը աղատել :

Երբոր վերջին ուսուսկան թուրք  
պատերազմին առնել, Տէր Ղու-  
կասով Պայաղիտը առնելէ ետքը  
Ալաշիւքի զաշտերը անցաւ,  
քաղաքը մնաց ուսուցիչներու  
եւ հայ քաղաքապահներու  
հսկողութեան տակ : Թուրքերը  
այս զինուորներուն սակաւութեան  
հոտը առնելով, դարձեալ / ու-  
ժեցին եւ Պայաղիտը պաշարելով  
սարսափելի նեղ դրութեան մը  
մատնեցին ուսուսկան ուժերը :  
Սովը ինկած էր արդէն իր ճի-  
ւաղի մագիլներով, եւ բերդին զի-  
նուորները կաթիլ մը ջուր ան-  
գամ չունէին իրենց պապակը  
անցնելու : Օղնութիւն ինդրելը  
անհնարին էր . այնպէս որ ուրիշ  
բան չէր մնար, այլ նօթութեան  
մեռելիլ, եւ կամ յուսահատական  
վերջին կռիւ մը մղելով զոհ  
դառնալ թրքական անողորմ զէն-  
քերուն :

Ահա այս մահու եւ կենաց բո-  
ւաքէն էր որ բերդին հրամանա-  
տար Շտոկոլմիչ, բոլոր զինուոր-  
ները եւ հայ քաղաքապահները

մէկտեղ ժողովելով, ամենէն վառ  
գոյներով բացատրեց անոնց ի-  
րենց ստիպելի վիճակը, որ մի-  
այն ստոյգ մահուան մը կրնար  
յանգիլ :

Եւ սակայն փրկութեան միակ  
նշոյլ մը կընդհնարէր հրամա-  
նատարը . բայց հերոսի սիրտ մը  
հարկաւոր էր այդ նշոյլը փեր-  
կութեան արեւի մը վերածելու  
համար :

Պէտք էր որ այդ զինուորներէն  
մէկը բերդէն դուրս սպրդէր,  
զրեթէ ստոյգ մահուան մը եւ-  
թարկուէր, հասնիլ զօրավար Տէր  
Ղուկասովին եւ անկէ օղնութիւն  
բերել :

Խորին լուծիւն մը յաջորդած  
էր հրամանատարին խօսքերուն .  
ամենուն սիրտը կը տրոփէր . «Վ  
պիտի ըլլար ա. դ զիւցազնը...»

Եւ ահա զինուորներուն շար-  
քէն կանչատուի առիւծի դու-  
խով, կրակէ սեւ աչքերով 25  
տարեկան երիտասարդ մը, եւ  
հնչուն ձայնով կը յայտարարէ .  
—Ե՛ս, հրամանատար...»

Սամսոն էր անիկայ : Շտոկոլմիչ  
ճակատը կը համբուրէ . հայ կու-  
րիճը ճամբայ կըլլայ իր զինա-  
կիցներուն մաղթանքները եւ հի-  
ացումը հեռը տանելով : Եւ կը  
յաջողի ալ : Աննկարագրելի վը-  
տանդներու յաղթելով թուրք եւ  
քուրդ բանակները կը ճեղքէ,  
Տէր Ղուկասովին կը հասնի, օղ-  
նութիւնը ժամանակին կուգայ եւ  
բերդը կազատի իր 1,500 զին-  
ւորներով : Սամսոն իր անձնու-  
րութեան համար հասարակ սպա-  
յի աստիճանին կը բարձրանայ,  
ինչ որ գործին համարմէք վար-  
ձատրութիւն մը չէր . սակայն ի  
փոխարէն Սամսոն անմահացած է  
Ռուֆֆիի «Խենդ» անմահ վէպին  
մէջ՝ Վարդան եւ «Խենդ» անուն-  
ներով :

Վ. ՀԻՒՐՄԻՒՋ

### ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Ա. Ղ. Պրոսթիլա . — Ահա տակ ձեր  
ինդրած հասցէն. Լազար Մանուկ-  
եան, Վիլէլմստորֆ (Վիլբիլմստորֆ) :  
Կարող էք նամակագրոջինքը ուղ-  
ղակի այդ հասցէին զրկել :

—)(—

### ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Թատիգ, 1 Սեպտ.

Լազարեան ձեռնարան . — Ասորի-  
ների հաւասարիւթիւթիւթ . — Հայե-  
րի մատչելիութիւն . — Բարեկարգի  
բրտախ : ս հայ զինուորի վիճակը . —  
Կարասայ . — Պարսից վերջին փոխա-  
նութիւնը . — Էմիր-Նիզամ . — Բարե-  
գործութիւնը շահագործվում է :

Քանի որ խօսքը բացվեց Թաշիր  
բաշի Սարգիս Յունանեանցի վրա,  
նրա մի քանի ազգային շահատա-  
կութիւնները թելով ընթերցողնե-  
րին ծանօթացնենք այդ պարտի  
հետ :

Յայտնի է որ Մոսկովայի Լազար-  
եան ձեռնարանում բարեկարգապէս  
նաղիրներ կտակութեամբ միշտ Պարս-  
կաստանից երկու ուշիմ եւ աղբաս  
հայ պատանիներ ձրի են ուսանելու :  
Կտակի այս տրամադրութիւնից մեր  
ազայ Թաշիր բաշին օգտվելով, իրա-  
որդին ձրի ընդունել է ապիս նոյն  
ձեռնարանում իբր աղբաս : Մինչդե-  
ռա քաղաքիս յայտնի հարուստ մարդ-  
կանցից մինն է : Չը դիտեմ, ըն-  
թերցողը ի՞նչ անուն է ապիս Թա-  
շիր բաշիի այս արարքին, որը կո-  
ղպտում, բռնաբարում է աղբատի  
իրաւունքը, եւ չքաւոր ուշիմ պա-  
տանու ապագայ հացը ձեռքիցը  
խլելով եւ ապիս իր կուշտփոր որ-  
դուն . . . :

Անցեալ տարի թուրք կատավարու-  
թեան ճնշման ներքեւ պարտից կա-  
տավարութիւնը սկսեց հալածել զաղ-  
թական հայերին իբր հիւսնատրի ար-  
չաւանքին մասնակցող կասկածելի-  
ներ : Սալմաստում ճիշդ այս պատ-  
ձառով ձերբակալվեց Երուանդ անու-  
նով մի երիտասարդ, եւ իբր ու-  
սանպատակ, յանձնվեց ուսուցիչ կո-  
սուլին : Այդ պարտնը կօնսուլի շատ  
մօտ ծանօթներին էր, եւ լոկ կաս-  
կածը չէր բաւելու նրան բռնատրի-  
լու . բնականաբար կօնսուլը մի կարճ  
հարցուփորձից յետոյ ազատ էր թող-  
նելու :

Այդ պարտնի մասին բարեխօսելու  
նպատակով դիմվել էր հայր Սարաջ-  
եանին եւ յայտնվել նրա իսկական  
անունը եւ ազգանունը, որպէս զի  
գիտեցաւ իր ազնուական ստոճից  
ծագում ունենալը, աւելի ուժով միջ-  
նորդի : Սակայն բանից դուրս է գա-  
լիս, որ Սարաջեան այդ պարտնի  
դէմ վաղուց ոխ ունենալով, ուզում  
է վրէժխնդիր լինել վատարար : Գի-  
տեցաւ թաշիր բաշիի որ աստիճան  
անվտանգելի լինելը, զիտամբ յայտ-  
նում է ձերբակալվածի իսկական ա-  
նունը—Յովսէփ Երկայնարագուկ Ար-

զուրկան իշխան - Թաշիր բաշին ուրախութիւնից խելացնոր վազում է կոնսուլի մաս եւ ամէն բան յայտնում, մասնում . . .

Կոնսուլը այդ մասնութիւնը լսելով, խկոյն որոշում է կազակների հակառակութեան ներքեւ ուղարկել Թիֆլիս: Արդէն մի տարի է ինչ խեղճ իշխան Յովսէփ Երկայնարագուհ Արդութեանց Թիֆլիսի բանաում առաւելում է, ուղղակի Սարաջեանի եւ Թաշիր բաշի մասնակցութեան զոհ դառնալով:

Թաշիր բաշի ազգայնաս եւ չար արարքներից միայն հարիւրից երկուսը յիշեցինք. նմանօրինակ վատութիւններ իրա համար սովորական բաներ են, եւ դեռ այս վատ ազգայաւը յարգվում, պատվում է, դեռ նրանից ակնածում են . . . մի ժողովուրդ, որ համարձակութիւն չունի թքել այդպիսիների երեսին, անարգել այդպիսի վատերին, տակաւին շատ է վայելելու նրանց չարիքների հետեւանքը, եւ տակաւին ստոր է մնալու . . .

Ժողովուրդը սրան ատելու փոխարէն, իր քուէով ազգային պաշտօնների է կոչում, հազարաձու, երեցփոխ է ընտրում . . .

Վերջերս լրագիրներում կարդում էք Ուրմիայում գտնվող Ասորիների դաւանափոխութիւնը: Ասորիներին ճանաչողները այնքան զարմանալի չեն գտնում այս լուրը, որովհետեւ սրանք թոյլ, մեղկացած եւ բարոյապէս փճացած ժողովուրդ են, խաչազոյների սխալ: Կաթոլիկ եւ բողոքական միսիոնարները այդ ստորնացած ժողովուրդի մէջ մեծ դործեր էին սեանում, այժմ կարգը եկել է Օրթոդոքսներին: Ասորիները կամենալով մի անգամից փրկվել պարսկական բռնութիւններից եւ հարստահարութիւններից, միտք են յղացել խրմորովին թողնել իրանց դարաւոր եկեղեցին ու գաւանանքը եւ մտնել Օրթոդոքսութեան փարախը, իրանց հոգիների հետ փրկելու համար նայնպէս եւ մարմինները . . . Անցեալ տարի այս միտքը յայտնում են սեղանս գտնվող ուսուցիչ կոնսուլին, եւ այս վերջինը հաղորդում է Պետերապոլիտին: Իսկոյն Պետերապոլիտից Ուրմիա են ուղարկում երկու ուսուցիչներ, որոնք մտնում են ասորիներին մէջ եւ քարոզում օրթոդոքսութեան ասորիական ստորիկայում: Բայց այս անգամ ինչպե՞ս ինչպե՞ս ասորիները մտնում են ասորիական ստորիկայում: Ահա այս միակ պատճառով ուսուցիչները տիրելու է ամբողջ Ասորպատականում, թէեւ առանց նրանց էլ արդէն տիրում էր: Միայն հայերի համար այս նորութիւնը ունի իրա կարեւոր եւ մտածելու կողմերը: Գուցէ հայերը ապագայում, ուսուցիչները գրում են մէջ մեծ դեր չը կատարեն. միայն ասորիները ուսուցիչները ձեռքով զործիք դառնալով՝ առանց հայերին մեծ ֆրաս պատճառելու, տեղի է ունենալու ուսուցիչները:

ՄԻՐՁԱ

Պարբեր, 27 Ապրիլ

«Աշխարհ իմ հայրենիքս է եւ ամբողջ մարդկութիւնը իմ ազգս»:

Կարիսըն

Սեպտեմբեր ամսոյ ամառիկն երկուշաբթի օրուան զործարարական տօնը այն րոնտիւն ունի Ամերիկայի համար, ինչ որ ունի մայրի մէկը Եւրոպայի մէջ:

Այդ օրը լուծ էին թշուառ բանւորը աշխատութեան հրաւիրող սուրիչները. սեւ սիրա ծինելոյցները, որոնք այնքան բանւորներու աշխատեցնող իրենց ձուլին հետ քամիին կուտան, հանդիսս կուտնէին. դոց էին առեւտրական եւ զրամական բոլոր հաստատութիւնները:

Լուսաբացին սրտաբաններէն մեծ քաղցութիւն մը եւ Գուպիւնորայարձ

զինուորները. Գոսթըն կը թափէին հանդիսատես լինելու բանւորական թափորին եւ ողջունելու արհեստի, գիտութեան եւ քաղաքակրթութեան հերոսները: Հանրապետական Ամերիկայի ռամկավարական քաղաքը արեւի ջերմ ճառագայթներով ողողում էր: Բիւրաւոր աստղազարդ զրօշակներ եւ նրբահիւս կարմիր, կապոյտ եւ ճերմակ վարագոյրներ տանիքներէն ու պատուհաններէն անփոյթ կերպով կը ծածանէին Գուպայի անկախութիւնը յայտարարելով, բայց անգիտակ միջազգային յեղափոխութեան կայրվի օրուան:

Չը կրցայ թափորին մասնակցել, սակայն Ստրուլ փողոցին հազարաւորներու հետ հանդիսատես եղայ թափորին գնացքին որ սեւեւց է ծամ, քաղաքին տալով շարժական դուրսահանդէսի ու նուագահանդէսի կերպարանքը:

Ստրուլ փողոցի հին դատարանին առջեւ, առժամանակ զարդարուն տաղաւարի մը տակ բազմած էր քաղաքագետ Պ. Գուլիսին, շրջապատուած կառավարական պատանեակներով, Արմատական-ռամկավարական քաղաքակերպ գործաւորներու քուէին յաղթական փառք կը ներկայացնէր: Մեր քաղաքագետը, աւելի ժողովրդական եւ յարկելի է քան հանքերու քանակային եւ սակայն տաճարներու քուէն Պ. Մաք-Բիւրլէյ Մ. Նահանգաց նախագահը:

Ժամը Թին երեւաց թատրոններու աշխատաւորներուն առջին թափորը, Մաս-Էվլին: Ի ծառուղիին ներքեւ, հեծելազօրաց գումարտակի մը եւ թատրոններու միացեալ «Պէնտ Միւլիթի» առաջնորդութեամբ: Այսպէս, հարիւրաւոր բանւորներ, հարիւրաւոր փողոցներէ ծնունդ առած՝ զարդարուած շքեղ կառքերով, հեծեալ եւ հետիտան կը հետեւէին յառաջընթաց բանակին, բանւորական եւ աստղազարդ զրօշակներով եւ ձողերու վրայ բարձրացած բողոք ու սպանալիքներով. ի հարկէ զինուորական կրթեալ գնացքով: Ամենագեղեցիկ պատկերն ան էր որ Ամերիկացին ու Սպանիացին, Ֆրանսացին ու Գերմանացին ու ուսի, ձեռք ձեռքի ստեւած՝ կը հաւատային մէկ հայրենիքի, մէկ ազգութեան եւ մէկ զաղափարի:

Այս մեծաշուք հանդիսին ատեն

զրամատէրը իր 28 յարկով տան բարձրերէն, ամպերուն մէջ ապագայի սարսուռը կզգար: Գործատէրը չէր ներէր իր աստղազարդ զրօշին քով գործաւորներուն ոսկեճամուկ զրօշակը՝ եւ ձողերու վրայ բարձրացած պահանջումները անհաւ: Արդեօք չհիասթափուեցա՞ն Գուպային դարձող յաղթական զինուորները, երբ լսեցին թէ հարազատ եղբայրներին կը կողոպտուին, քոյրերին իրենց ծննդավայրին մէջ կը բռնաբարուին տնտեսական անտանելի գրութեան մը ներքեւ, այս հարուստ եւ արդիւնարեք երկրին մէջ:

Վարդ-Վրոյս

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՅԵՇԱՍԱԿՆԵՐ

—(—)

Տուրուբերանի նշանաւոր մայրաքաղաքը Բաղէշ կամ Սալմոնոր որ երբեմն Աղձնեաց գաւառին իր ամենազաւրիստոր անցք՝ ու միանգամայն կարեւոր քաղաք՝ իր մեծ տեղն ունեցած է հայոց հարստութեանց մամանակամիջոցներին: Իր պատմական ու հնադիտական տեսակէտով որքան հետաքրքրական նոյնքան ալ կարեւոր է նաեւ իր բնական ու երկրաբանական երեւոյթովը:

Հայաստանի վեց նշանաւոր (մայիս 11) ըէֆօրմներ մէջ նշանակուած) նահանգներէն մէկն է նաեւ Բաղէշը (Պիթլիս) Աղձնեաց մուսթի բերան, Տուրուբերանի հարուստին սահմաններէն եզերուած, Տարուս ու Անտիտաւրոս լեռներէն ձեւացող հիանալի ձորահովտի մը մէջը, չորս ձորերէն հոսող չորս գետերի վրայ, Տիգրիսի մէկ ճիւղին եզերքը իր ընդարձակ տարածութեամբ ու շէնքերի այլազան գեղեցիկութեամբ՝ շինուած է Հայաստանի այդ նշանաւոր քաղաքը:

Ամէն կողմէն կանանչ ու սիրուն լեռներով շրջապատուած այս քաղաքը՝ ուպաւորութեանց այն խոր ազդեցութիւն կը գործէ

ՎԱՐԳ-ՊԱՏՐԵՒՈՒԹԻ ՅԵՇԱՍԱԿԱՐԱՆԸ (39)

Այդ միջոցներում Կլեան հիւանդ էր եւ գտնվում էր բանալի հիւանդանոցում: Ես ուղեւորվ նրանից մօտիկ լինել եւ կարողանալ նրա հետ յարաբերութեան մէջ մտնել, սկսեցի առողջութիւնիցս զանգատվել, սենեակիցս դժգոհ լինել եւ խնդրել որ ինձ հիւանդանոց փոխադրեն:

Մի անգամ միւղիւրին զիմեցի, չեղաւ. վերջը զիմեցի բժշկին, որը յոյն էր, նա ինձ խորհուրդ չը արեց, յայտնելով թէ հիւանդանոցի օդը սեւելի վատ է, այն սեղ աւելի կը հիւանդանամ. իմ տեղս գտնէ ազատ սենեակ է, երբեմն կարողանում եմ բակում զբօսնել: Սակայն ես յամառեցի. եւ ինձ տարան հիւանդանոց. բայց անպիտանները Կլեանին հիւանդանոցից դուրս հանեցին եւ տարան իմ նախկին սենեակը: Նպատակիս չը հասայ, չը կարողացայ Կլեանին հետ յարաբերութեան մէջ մտնել. միայն ժանդարմս էր Գրիգորից բարեւ բերում եւ իմ բարեւը նրան հասցնում: Մի օր էլ ինչ որ սնուց

խմորեղէն, իրանց տանից բերուած ժանդարմիս հետ ուղարկել էր ինձ: Միայն այդ ժանդարմի օրպահութեան ժամանակ ես ու Կլեանը կարողանում էինք իրարից լուր առնել:

Հիւանդանոցի կեանքը խկապէս անտանելի դարձաւ. օդը լի էր զեղերի հոտով: Ծշմարիտ սենեակս առանձին էր. բայց այնուամենայնիւ օդը չարուանակ ապականվում էր եւ ես ստիպված էի միշտ չնջել այդ օդը: Ստամոքսս բոլորովին խանգարվեց, բոլորովին չը կարողացայ ուտել, ամենեւին զբոսանքի չէի գուրս գալիս, օրեր, շաբաթներ ու ամիսներ անցկացրի այդ յարկի տակ: Ահա այդ միջոցին Մաքսիմովը պահանջեց ինձ աւելի լաւ կերակուր տալ: Բայց նորից գործ էի անում մեծ մասամբ կաթ եւ թէւ: Կերակուրները, կաթի եւ շաքարի մի մասը տալիս էի հիւանդներին, որոնց միջից աւելի համակրելի էր մի Ալբանացի երիտասարդ աւագակ որ շատ ծանր հիւանդ էր, ինձ արգելված էր եւ զրանց հետ խօսելը: Ալբանիացին իմ զրանս մօտ էր պսակած: Դուռը բաց էի անում, նրան կաթ շաքար էի տալիս

եւ մի քանի խօսք փոխանակում: Հիւանդները սկսեցին ինձ համակրել. նրանք միշտ բարեւ էին ուղարկում եւ հաւատարմի ժանդարմիս յայտնում որ հիմա իրօք հասկացան թէ հայ կոմիտաճիները լաւ մարդիկ են, Կիրգորը (Կլեանի մասին է խօսքը) «մախուս չօճուխ» էր. «գրուզու փրիթ». այս Մոսկովիին էլ մեղ վրա ցուում է: Ալբանիացին ասում էր. «Եթէ ես ազատվեմ, նորից էլ իսկա զառնամ. եւ իմ լեռներում «Գրիգորը» կամ Մոսկովիին ինձ հանդիպեն, ես էլ կոմիտաճի կը օրոտնամ: Ալբանիացին մի քան օրից յետոյ հոգեւարք էր, ամբողջ մարմինը ուռել էր. ինձ կանչեց եւ հազիւ չնչալով արտասանեց.

—Մոսկովի, ես մեռնում եմ, Աստուած քեզ ազատէ:

Աչքերս թրջվեցին. էլ կանգնել չկարողացայ եւ սենեակս մտայ. մի քանի վայրկեանից ոստիկանը յայտնեց որ Ալբանիացին մեռաւ: Ալբանիացու մահից յետոյ, մի քանի օր չափազանց ախրեցի. մրսաբովս անցնում էր թէ կարող էր պահանջել որ Գրիգորն էլ, ես էլ այն-

սեղ մեռնէինք, մասնաւոր Գրիգորը, որ հիւանդ էր եւ չափազանց մաշված: Հիւանդների սենեակով անցնելիս շարունակ աչքս Ալբանացու մահճակալի վրա էր ընկնում, ուր հիմա պսակել էր մի ուրիշ թուրք բանտարկեալ խամ (ցմաճ բանտարկեալ):

Կիւրները յանկարծ հիւանդանոցի ներքին յարկում աղմուկ էր բարձրանում. բարակ շղթաների շօնով ձայն էր գալիս. մի օր էլ երբ լսեցի պահապանին հարցրի եւ իմացայ որ խենթեր են բերում այնտեղ եւ ապա ուղարկում յիմարանոց: Խնդրեցի որ ինձ թոյլ տան գնամ տեսնեմ: Թոյլ տուին միայն սանդուխներէր նայնով. մի ձեռքով էր, ձեռքերը բարակ շղթայով կապած, պատէ պատ էր ընկնում, հայհոյում Սուլթանին: Մուսկովիին, յետոյ մի քիչ խաղաղում էր եւ սկսում լաց լինել. նորից կատաղում էր: Պահապանները սկսում էին ծեծել թշուառ խենթին:

(Շարունակելի)

առաջին անգամ զինք հեռուէն չեռան մը սրտէն՝ զիտողին վրայ ինչ տպաւորութիւն որ կը թողու իւր սիրտարի բարձունքէն, Չամբը- ճայէն իւր սիրտարը զիտողին վրայ :

Գատուան որ վանի ծովի հա- րաւային եղբրաց վրայ՝ Բահվայ ըստած գաշտագետնի հիւսիսա- յին ծայրը շինուած՝ հարիւր տունէ տեղի բնակիչ ունեցող հայ գիւղ մըն է, Սալնաձորոյ ա- ռաջին նաւահանգիստն է, Բա- ղէշէն 4—5 ժամ հեռու : Գատուանէն մինչեւ Բահվայի գաշտահանգը կը տարածուի, նէփ- րով ու Գրգուռ նշանաւոր լեռ- ների հարաւային կողմէն : Այս գաշտահանգի երկայնութեան կը ձգի այն ուղին որ Գատուանէն կը սկսի մինչ Բաղէշ՝ ու զոր տեղ տեղ կը կարեն Մշոյ գաշտի, Խորհուրտեանց ու Բընուեանց հարաւային գիւղերը գնալիք պո- ղոտաները : ու այսպէս Բահվայի ընդարձակ հովիտը՝ ալ ու ձախ կողմերէ տեղ տեղ ակոսուելով տարբեր ուղիներէ՝ ամրան մէջ իր շուրջ սփռուած, Զրիտոր, Ալամէք, Ծժաջր ու կամախ հայ գիւղերով ու ասոնց արտերով, ա- փերով, գութանով, սխարով ու տուարով, հազարիչ գեղեցիկութիւն մը կը կազմէր :

Գատուանէն մինչ Բաղէշ եղած 4—5 ժամ հեռուութեան մէջ, չորս հատ մեծ քարուկի խաներ կան շինուած, (Ալամենց խան, Պաշ խան, Օղբրով խան ու Փախչու խան) :

Այս խաները գրէթէ մէյմէկ ժամ հեռաւորութեամբ իրար- մէ անջատ շինուած են այն գիւ- րութեան համար որ՝ ձմրան ա- մենախիտ եղանակին ապաս- տանարան տան բըքարգելք և ուղեկորոյս ճամբորդին : Բահ- վայի ձմեռն ու բուքն իր տեսա- կին մէջ աննկարագրելի է : Վանի ծովի վրայէն Բընուեանց նե- ջանցքէն, նէրրովիցն ու Գըր- գուռէն ինչպէս և Մշոյ ընդար- ձակ գաշտի երկայնքէն, Զիտու- րայ անցքէն փոշոյ սաստկաշունչ քամիին միանալով նաեւ գեկ- տեմբերէն մինչ փետրուարի վերջ տեղացած ձմեռն ու տարափը՝ շա- րունակ փոթորիկներ յառաջ կը բերեն այդ վայրը : Մշոյպէս սաս- թիկ կըլլայ շատ անգամ այս փո- թորիկներ ու բուքեր որ շարաթ- ներով այդ ճամբաները կը գոց- ուին ու երթեւեկութիւնները կը դադրին : Այդպիսի ցրտաշունչ օրերուն շատ անգամ ու շատ տա- րիներ ճամբորդներէն իրենց ա- նասուններով մէկտեղ խեղդուող- ներ և գազաններին կեր եղողներ անպակաս են : Սակայն նկատելի կէտն այն է որ, չորս ժամու բա- ցակայութեան մէջ չորս մեծ խաներ կան շինուած՝ որոնք հայկական ճարտարագետութեան նմոյշը կը կրեն, ու թուրք ա- պիկար, ու անկերպարան կառա-

վարութիւն իր անզոր զիտակ- ցութեամբ չէ կրցած օգտուել ա- նոնցմէ, ու հէզ ճամբորդներին օգնութիւն մը չի կրնար ընձե- անել, երբ անոնք բուքին ու փո- թորիկին խաղալիք դառնալով, յուսահատական ջղաձգումներ կուենան : Եւ սակայն միթէ յի- մարութիւն չէ՞ թուրքէն ո՛ր և է օգտակար բան սպասել, երբ իր նշանաբանն է քանդել, ոչնչա- ցնել ու աւերել այն ամէն ինչ որ երկրի առաջդիւմութեան կը ծա- ռայէ :

ՆԱՀԱՊԵՏ (Շարունակելի)

ՊՈՒՍՑ ԿԵԱՆՔԻ

Թուրքիոյ հիւանդ մարմնին վրայ ամէն օր ժանտարոյր պա- ւարներ կը պայթին : Օր շանց- նիւր որ վարչական և անհատա- կան տեսակ տեսակ զեղծումներու, ջարդերու, կողոպուտներու և առեւանգումներու արձագանգ չը սփռէ աշխարհի վրայ : Կառա- վարութիւնը իր ամէն շարիք- ներու դարման՝ պարգեւ, շքա- դրամ և պաշտօն կը շնորհէ ոճ- րագործներու : Իրերը յեղաշրջ- յուած են : Երեսուցիներ վարձք և անմեղին՝ պատիժ կայ այս երկ- րին մէջ : Նոյն իսկ թուրք քըն- նիչներու վկայութիւնով բանտե- րը լեցուն են չգատուած անձե- րով, որոնք պարզ ամբաստանու- թեան մը վրայ, տառապանքի եր- կար օրեր կանցնեն զազրելի նկուղներու մէջ : Մինչ անդին՝ պատրաստակեր սօֆթաները հա- րիւրներով ոսկի պարգեւ կը ստանան աչք գոցելու համար անցած դարցածներուն :

Կրէտէի զործին առած կէր- պարանքին պատճառով Սուլթանը կատարած է իր նախարարներուն դէմ, և շատ հաւանական է որ տագնապ մը տեղի ունենայ մօտ օրերու : Բաշաներէն և ոչ մէկը չէ համարձակած փառիշահին աչքը բանալ և իրերը ցուցնել իրենց ցնցող մեղկութեան մէջ : Այնպէս որ այժմ՝ բանը բանէն անցած՝ բնաւ արդիւնք մը չեն տար այն հեռագիրները՝ որոնց- մով Գուռը Լոնտոն քաղաքը կը ումարկոծէ :

Այս խառն և շփոթ ժամանա- կամիջոցին է որ Սըր Աշմէտ Պարթէթ, ծանօթ թրքասէրը, եկած է իր ծառայութեանց պը- տուղը քաղելու : Մայրաքաղաքը գեղեցիկացնելու վիթխարի ծրա- գրեր մատուցած է կառավարու- թեան : Մեծ Պուլլաուի մը բա- ցումը Պապ-Ալիէն սկսեալ մինչեւ Թաղսիմ, էլեքտրական թրամ- վէյով և երկու զուգահեռական կամուրջներով, շքեղ խանութ- ներով ու զբօսավայրերով եղեր- ուած : Աւրիշ բազմաթիւ եւրո- պայիներ եւս, ամէն ազգէ, հոս թափած են : Որը ելքըտրական լոյսով ողողել կառաջարկէ քա-

ղաքը, որը քարափներ, ակնա- պարար պարտէզներ հաստատել : Բայց դիտուած է թէ թուրքը կեղծ սիրայօժարութեամբ մը ըն- գունելով հանդերձ այս առաջդի- մական առաջարկները, շատ քիչ անգամ յաջող ելքի մը կը յան- գեցնէ պաննք : Կարծես կը զգայ թէ հեռու չէ այն ժամանակը ուր պիտի պարտաւորի իր մղկիթ- ները և մէտրէսէները շարկած՝ իր Մոնգոլիան վերադառնալ : և կը փափագի կոստանդիանոսի քաղաքը անփոփոխ թողուլ այն- պէս ինչպէս գտած էր գրաւած տոները, հինգ դար առաջ, Յա- թիհի անդարձ օրերուն մէջ :

Ժ Ո Ղ Ո Վ

Վանայի Թաղ Խորհուրդը կազ- մաւորուած ըլլալով անգամներուն մեծ մասին հրաժարուով, Թաղա- յին ընդ. ժողովին նախագահ Տ. Մար- աիրոս քահանայ երրորդ անգամ ըլ- լալով ժողովի կը հրաւիրէ Թաղե- ցիները այս անկերպարան վիճակին վերջ մը տալու միջոցներուն վրայ խորհրդակցելու համար : Առաջին եր- կու ժողովները ապարդիւն քննար- ըլլալով ժողովականներու անբաւա- կանութեան պատճառով, նախագահ հայրը կը յայտարարէ թէ այս ան- գամ նոյն իսկ եթէ մեծամասնութիւն մը չգոյանայ, ըստ օրինի որոշումիւր պիտի դուրս եւ ոչ ոք բողոքելու ի- րաւունք չպիտի ունենայ ապագային : Ժողովը տեղի պիտի ունենայ վա- ղը, կիրակի, առաւօտեան ժամը 10ին տղայոց վարժարանին մէջ : Թող ա- մէն թաղեցի իր պարտքը կատարէ, առանց զատապարտելի անտարբերու- թեան մը անձնատուր ըլլալու :

ՖԵՐՏԻՆԱՆՏ ԻՇԽԱՆԸ

Ն. Բարձրութիւնը որ Էօքսի- նօկաատի պալատը կը բնակի այս պահուս, հաճած էր անցնել Դշ. օր հետիոտն պտոյտ մը կատարել քաղաքիս մէջ, ընկերակցու- թեամբ իր եղբոր՝ Ալպէս Իշխա- նին : Պարզ քաղաքացի տարազ կը կրէր և սովորական մահկա- նացուի պէս խանութէ խանութ շրջելով գնումներ կը կատարէր : Արեւելքցիի մը, որուն համար իր երկրին իշխանը տեսնելը զը- րեթէ անհնարին է, և որ վար- ժուած է նոյն իսկ երկրորդական և երրորդական պաշտօնատար- ները զինուորներու և հետեւ- որդներու պարիսպի մը ետեւէն ընդհնամարել, ախորժելի անակն- կալ մըն էր տեսնել վեհապետ մը, որ կը յօժարէր թափանցելու ժո- ղովրդային խոնարհ խաւերուն մէջ, խօսիլ ամենուն հետ, շահա- գրգռել անոնց վիճակին վրայ : Արքունեաց գահարաւմառ Պ. Պարամանի խանութէն զատ, իշխանը այցելեց նաև ուրիշ հա- յու մը Պ. Մարտիրոս Սերովբեանի խոնարհ կրպակը, որուն փեղկին մէջ ի տես դրուած նըքագործ գանակները ուշադրութիւնը հը- րաւիրած էին : Կերեւակայէք

համեստ արհեստաւորին շփոթու- թիւնը իր Ոգոստափառ յաճախոր- դին անակնկալ այցելութեան պահուս :

Ք Ր Ո Ն Ի Կ

Կիմանանք թէ Պուրթէշի հայ գաղթականները այս պահուս խորհրդակցութիւններ կը կա- տարեն, նոյն քաղաքին մէջ հայ ընթերցարան մը հիմնելու : Բո- լոր ուժովնիս կը ծափահարենք այս գաղափարին որուն իրագոր- ծումը քայլ մըն է դէպ ի ազգայ- նութեան զգացումը : —Գոհութեամբ կը ծանուցա- նենք թէ տեղոյս Արեւելեան ար- պարանին տէր Տ. Օննիկ Բարեղ- եան, որ անցեալ յունվարին դուրս հանուած էր պուլկարական հողէն, կառավարական հրամանով Վառ- նա վերադարձած է : —Հանդէս Ամսօրեայի մէջ կը կարդանք թէ Գերմանացի հայա- գէտ Պ. Լայստ՝ հայկական նոր և նորագոյն բանաստեղծութեան ճաշակը տալու համար իր ազգա- կիցներուն, Պատկանեանի, Գոր- եանի, Պէշիթթաշեանի, Ալիշա- նի և ուրիշ հայ գրողներէ հատ- ուածներ գերմաներէնի թարգ- մանած է առանձին հատորի մը մէջ : —Էլմիհանի Սինոգը ներքին գործոց նախարարէն թոյլտուու- թիւն խնդրած է որպէս զի Աժ- տէրխանի թեմին առաջնորդը Սիպերիա բնակող հայ Լուսաւոր- շականներու հոգեւոր պետքերը հոգայ : Այդ սառնապատ երկրին զանազան կողմերը աքտորուած հայերուն թիւը երկու հազարի յանգած է : —Էլմիհանէն կը ծանուցանեն թէ Իւթիւճեան և Ն. Արսլանեան վարդապետները արդէն եպիսկո- պոսացած են և մօտերս Պոլիս պիտի գառնան : —Իզմիրէն կը ծանուցուի թէ Ֆէրքին սրիկայ կրօնաւորը, որ Ամերիկայ փախած էր, յաջողե- ր է ինքզինքը արդարացնել զինքը զրկող ընկերութեան առջեւ : յայտարարելով թէ «Իզմիրի բո- ղոքական միսիոնարները զրպար- տեր էին զինքը» : Այդ միամիտ ընկերութիւնն ալ հաւատացեր և Ֆէրքինը պաշտպանող յայտարա- րութիւն մը հաներ է : Աւելին կայ : Ֆէրքին ծանիմարքա զըր- կուեր է նոյն ընկերութեան կող- մէ իբրեւ տնօրէն ուրիշ որբա- նոցի մը : —Պատրիարքը Վանայ նարե- կոյ վանքի բացման առթիւ հո- գարարութեան ուղղած գրու- թեանը մէջ մասնաւորապէս տե-

զեկութիւն պահանջած է Ս. Գրիգոր Կարեւակացիի գերեզմանին վիճակին վրայ, և պատուիրած որ ամենափոքր թերութիւնը անգամ չգործուի այդ աննման վարդապետին յիշատակին դէմ:

—Պրոսպէն կը գրեն թէ Տիւնարէն Գարահիսար գացող թըղթատարը աւազակներու ձեռքով կողոպտուեր է: Գողցուած գումարը 7,000 ոսկի է եղեր:

—Կը յիշեցունենք Վառնայի հայ երաժշտասէր հասարակութեան թէ այս իրիկուն է որ, Սաէտինէնիէի սրահին մէջ տեղի պիտի ունենայ Պ. Նաթան Ամիրխանեանցի և իր համակրելի աշակերտներուն նուագահանդէսը զոր ծանուցած էինք անցեալ անգամ: Կը յուսանք որ հասարակութիւնը այս առիթը չփախցնէր գեղարուեստական քանի մը ախորժելի ժամեր անցնելու:

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊԲԵՐ**

Յ Ր Ա Ն Ս Ա

Կերեւայ թէ Հանրապետութեան թշնամի տարրերը երգումը բաժն են երբեք հանգ-տութեան վայրկեան մը չթողուլ կառավարութեան:

Տրէյֆիւսի հրատալ խնդրին յուզումները տակաւին հեռի են մեղմանալէ: և ահա Փարիզի շինութեանց գործաւորները լայնածաւալ գործադուլ մը կը հռչակեն իրենց վիճակին բարելաւումը պահանջելով գործատէրերէ: Բողոքարկուներու թիւը որ առաջ հազիւ քանի մը հազարի կը հասնէր, այժմ 60,000 յանգած է, որովհետեւ ուրիշ գործաւորական դասեր ալ, հացագործներ, թիթեղագործներ, կահագործներ եկած միացած են առաջիններուն: Խնդրին ամենէն տագնապալի կողմը այն է որ գործաթողները խումբ խումբ Բարիզի հրապարակները լեցուած ազմկալի ցոյցեր կընեն: Վերջին օրերս քիչ է մնացեր որ արիւնալի ընդհարումներ տեղի ունենան ցուցարարներու և բանակին միջև, որ, խնդրին ստիպողականութեան առջև, ոստիկանութեան օգնութեան հասած է:

Այդպիսի ընդհարում մը աւելորդ է բնութիւնէն միայն փաստեր ալլէ և աղետալի կրնար դառնալ Հանրապետութեան: Յեղափոխութիւնները և նոյն իսկ կառավարական գրութիւններու սպառնալից գրեթէ շատ անգամ այդ կարգի աննշան միջադէպերէ ծնունդ կառնեն: Ֆրանսական ազմկայոյց մամուլին մէկ մասը ալ աւելի առաջ երթալով, նոյն իսկ քանի մը զօրավարներու հանրապետութեան դէմ գաղտնի դաւադրութեան մը խօսքը կընեն: Բարիզի քաղաքապետական խորհուրդը ժողով գումարելով շատ մը զիջումներ ընել առա-

ջարկեց գործաւորներուն պահանջումներուն, սակայն գործադուլը յամառօրէն կը շարունակուի, և նաև տը Մարտ բանակետի մը երեւոյթը կընծայէ այս պահուս:

Գործաւորներու յամառութիւնը նշան մըն է թէ պարզ գործադուլ մը չէ այս, այլ աւելի քաղաքական զոյն մը ունի յար և նման Տրէյֆիւսի խնդրին, որ անշուշտ մարդասիրական խնդիր մը ըլլալէ շատ հեռու է:

**ՓՐԻՍԿԻՍԻԻՆԸ**

Մինչդեռ ծովակալները կըկըսէին արդէն ազգու միջոցներ ձեռք առնել թուրք զօրքերը կրէտէն բռնի կերպով դուրս հանելու, մինչ ֆրանսացի Թոթիէ ծովակալը կը յայտարարէր ժողովրդին թէ հալածման գործը սկսելէ 48 ժամ առաջ իմաց պիտի տայ որպէս զի ամէն մարդ ժամանակ գտնէ աղատանելու, ապրին, թուրք կառավարութիւնը, զգալով թէ ամէն բան վերջացած է իրեն համար, թէ իր ուժերը կը զուտ են ու իշխանութեան վախճանը հասած, ապահով վտանգը կանխելով կը փութայ հրաման ղրկել կրէտէ, որպէս զի թուրք զինուորները հեռանան:

Այսպէս, կրէտէի խնդիրը լաւագոյն պայմաններու տակ է: Եւրոպան թուրքին ճիտին կոխելով, իր բոլոր պահանջումները գործադրել տուաւ: Միայն թէ Դուռը կը պաղատի որ գտնէ քանի մը թուրք զինուորներ պահելու արտօնութիւն ունենայ կրէտէի ու է մէկ կէտին վրայ, իրերու նշանակ մը Սուլթանի անուանական գերիշխանութեան: Ասկէջ զատ, գաղտարաններու հաստատումը և վարչական ծրագրին շուտափոյթ գործադրութիւնը կը խնդրէ:

—Լանքաշայրի հրացանակիրներու վաշտ մը Ալեքսանդրիայէն Քանիա հասած է:

—Ճէվատ փաշա Պոլիս մեկնած է: Միջազգային ստիկանութիւնը 38 հատ նոր թուրք խուվարարներ ձեռքակալեց:

—Իսլամ ժողովուրդը որ մինչև վերջին օրերս անտեղեակ էր անցած դարձաներուն, ցաւօք սրտի, այլ համակերպութեամբ տեղեկացաւ թէ իրեն արիւնակից զինուորները պիտի հեռանան: Միայն դիտել տուեր են թէ քրիստոնեաներն ալ պէտք էր որ իրենց հետ զինաթափ ըլլան: Հակառակ իսլամական համակերպութեան, ծովակալները միջոցներ ձեռք առած են որպէս զի թուրք զինուորներու մեկնած օրը իսլամները ու է խուվարութիւն չկրնան հանել:

**ԽՍՈՒՆ, ԼՈՒՐՆԵՐ**

Գերմանիոյ կայսրը և կայսրուհին վենետիկ հասած են: Իտա-

լիոյ արքունեաց այցելելէ ետքը Կ. Պոլիս պիտի երթան:

—Սերպիոյ կառավարութիւնը իր գեսպաններուն հրաման զըրկած է իրենց գտնուած երկիրներուն կառավարութիւններէն խնդրելու արտաքսուած անիշխանականներուն ցանկը, որպէս զի Սերպիոյ տեղեկութիւն ստանալով զանոնք չընդունի երկրին մէջ:

—Պուլկարիոյ իշխանը նախորդ եջ օր անձամբ կատարեց կէպէճէ Տէֆլէ նոր երկաթուղիին բացումը, Մարի-Լուիզ, Քլէմանթին իշխանուհիներուն ու ներքին և հանրօգուտ շինութեանց նախարարներուն ներշնչութեանը:

Կրսուի թէ իշխանը Սօֆիա պիտի երթայ մասնակցելու համար մեծ ռազմափորձերուն որոնք կը սկսին այսօր:

—Ֆրանսական կառավարութիւնը պատուոյ լէգէոնի բարձրագոյն խորհրդին յանձնարարած է Էսթէրհայի պատուանշանը ետ առնել:

—Ֆրանսայի այս չիթ օրերուն մէջ Զօլա իր ապաստանարանին մէջ «Արդաստուրութիւն» անուն նոր վէպ մը գրելու զբաղած է: Լուստ, Հոովմ և Բարիզ վէպերուն շարունակութիւնը պիտի ըլլայ Զօլաի այս սպառնալի գործը: Կրսուի նաև թէ մեծ վիպասանը պատմութիւն մըն ալ Տրէյֆիւսի խնդրին վրայ պիտի գրէ, որ սակայն իր մահէն ետքը հրատարակ պիտի հանուի:

**ՍԵՐՊԻՆ ԵՒ ԹՈՒՐԿԻՆ**

Սաատէտաին փաշաի տնօրինութեան ներքեւ գտնուած յանձնաժողովին բռնած զիրքէն համոզում գոյացուցած ըլլալով թէ թուրք պաշտօնական օսկանները մտադրութիւն ունին Հին-Սերպիոյ յրիստոնեայ սերպերու վրայ Ալպանիացիներու կողմէ գործուած խժգժութիւնները բացարձակապէս ուրանալ, Պելկրատի կառավարական շրջանակները կը հաւաստեն թէ սերպ կառավարութիւնը ուղղակի Մեծ Տէրութեանց պիտի դիմէ, խնդրելով որ, ասոնք զիմումներ ընեն Դրան, արգիլելու համար այդ խժգժութիւնները որոնք սահմանուած են բոլորովին բնաջինջ ընել սերպական տարրը այդ երկիրներուն մէջէն, բան մը որ վերջին աստիճան կը գրգռէ սերպ ժողովուրդը:

**ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԳՐԱԳԱՐԱՆ**

ԵՐՐՈՐԴՅԹԱՂ, ԹԻԻ 66  
Պարսկական հիւպոստոստանին զիւնաց Այս հաստատութիւնը որ տարիէ մը ի վեր գրքեր կը մատակարարէ ընթերցասէրներու, նոր գրքերով ճոխացած կը շարունակէ բաց միտամէն Գշ. և Կիրակի ժամը 1—5. իսկ եջ. կէս օրէ ետքը միմիայն կանանց համար:

Պուրկազի Օրիշ Նասիւնայր թուականէս երկու ամիս ետքը վարձու պիտի տրուի տարեկան 3,000 ֆրանքով: Յիշեալ օթէլը կը պարունակէ 7 սենեակ ամրաշտովին կահաւորուած և 15 անկողին իրենց կազմաներով: Նոյնպէս ստորնայտրկը ճաշարան մը ունի կահաւորուած, այնպէս որ բացառիկ ծախքեր ընելու բնաւ պէտք չկայ: Փափագողները կը հրաւիրուին Պուրկազ, Պ. Կոտի ֆարթուրուլիսի հետ տեսակցելու:

**ՎԱՐՈ**

ԵՐԿՈՒ ՍԷՐ  
(ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՃ)  
—)(—  
( Գ ի ն 1 Ֆրանգ )

Մնացած սակաւթիւ օրինակները կը ծախուին վառնալի մէջ Շարժումի խմբագրատունը, Ֆիլիպէ Տ. Անտոն Կոչի մօտ. Ռուսչուք՝ Հայկ Մալախեանի սրճարանը, Սօֆիա՝ Տ. Մուշեղ Արծրունիի քով:

Մտերս մամուլին կը յայնձնուի նոյն հեղինակին «Բռնութեան զոհերը»:

**ՊՕՐՍԱ**

Վառնա 3 Հոկտեմբեր  
ՊՈՒՂՏԱՅ  
Վազօն, լիպր 55—58, հէքթօլ 8.15—9.70 ֆրանք  
Արապա, լիպր 55—60, հէքթօլ 9—12 ֆրանք

ԱՐԲԱ  
Լիպր 42—50, հէքթօլ 5.20—5.80 ֆրանք

ԵՌԼԱՅ  
Կիւնտէ 8—10 արապա կէլմէքտէ տիր. 4—4.40 ֆրանք

ՏԱՐԸ  
Կիւնտէ 5—6 արապա կէլմէքտէ տիր. 58—60 լիպր, 4.60—5 ֆրանք

ՖԱՍՈՒԼԵԱ  
Կիւնտէ 70—80 արապա կէլմէքտէ տիր 100 օգոստ 15—21 ֆր. մալա կէօրէ:  
Առապա մուսուլէսի նարօլէոն 21 ֆրանք հիսապը իլէ տիր.  
Կիւնտէ 15—20 վազօն, 200—250 արապա պուզոտայ, 70—80 արապա արբա կէլմէքտէ տիր:

**ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՇԱՐՇՈՒՄ»**

Կը տպագրուին ամէն լեզուէ այցեատման, հասցեատման, նամակագրուի, հարսանեկան հրատարակիչ, մահապղ, ինչպէս նաև պրօշիւռներ:

Գիներն յոյժ գիւրամատչելի: Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին:

**ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ**

Ս. ՍԱՊԱԶ-ԳԻԼԵԱՆ  
—)(—  
ԵՒՐՈՒՅՅԻ ՎԱՂԱՎԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ  
ԲԵՐԼԻՆԻ ԴԱՇԵՆԱԴՐՈՒԹԻՒՆՅՈՅ ՅԵՏՈՅ  
—)(—  
Գին 1 Ֆրանք

Կը վաճառուի Շարժումի խմբագրատունը:

**«Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ»**

Վառնաի մէջ կը վաճառուի Մուսալա, թահիլ կէօղիպէօյլքեանի խանութը, և Ապտիլբարահման մզկիթին դէմը հայկական գրատունը: Ա. Զարպանէլեանի քով:

Печатница «Взаимность» Варна.